Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2019թ. հուլիսի 18-ի թիվ 481-Լ հրամանի
Ձև

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19332/2021/ԿՈՒՎ4/Ա

ք. Երևան

26.05.2021թ.

1. **ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԶԱՆՆԱ ՌՈԲԵՐՏԻ ՀՅՈՒՍՅԱՆ**
(հարկային իրավախախտում կատարած անձի անունը, ազգանունը, կազմակերպության լրիվ անվանումը, ՀՎՀՀ-ն (առկայության դեպքում)

2. **Ք.ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 1 ՓԿՂ., 14Շ, 131ԲՆ**
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. 5107620272
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և /կամ/ հանրային ծառայությունների համարանիշը (հայտնի լինելու դեպքում))

4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել

ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ռուզաննա Ռոբերտի Հյուսյանը (սոց քարտ 5107620272) հանդիսացել է Կոտայքի մարզ, Առինջ Ա թաղամաս 6-րդ փողոցի թիվ 12/1 և 12/2 բնակելի տների կառուցապատող և 2018 թվականին իրականացվել է Կոտայքի մարզ, Առինջ Ա թաղամաս 6-րդ փողոցի թիվ 12/1 և 12/2 բնակելի տների օտարման գործարքներ, որոնց պայմանագրային արժեքները համապատասխանաբար կազմել են 60.000.000 և 64.000.000 ՀՀ դրամ:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 145-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների՝ այլ ֆիզիկական անձին օտարման դեպքում օտարված շենքի կամ տարածքի (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) օտարումից ստացվող եկամուտը հաշվարկվում է գործարքի փաստացի գնից ելնելով, իսկ գործարքի գնի բացակայության կամ գործարքի գնի՝ Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայից պակաս լինելու դեպքում՝ դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի չափով.

Վերը նշված անշարժ գույքի օտարման գործարքի մասով՝ ֆիզիկական անձ Ռուզաննա Ռոբերտի Հյուսյանի կողմից հարկային մարմին չի ներկայացվել 2018 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ:

5. **Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը**

Ֆիզիկական անձ Ռուզաննա Ռոբերտի Հյուսյանի կողմից 2018 թվականի ընթացքում օտարված անշարժ գույքերի մասով հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ 2018թ. ընթացքում օտարված անշարժ գույքի մասով՝ կհաշվարկվի եկամտային հարկ 20 տոկոս դրույքաչափով՝ **24,800,000 ՀՀ դրամ գումարի չափով ((60,000,000 + 64,000,000)*20%):**

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ **10,409,800 ՀՀ դրամ** գումարի չափով [**24,800,000x365x0.075%+24,800,000x365x0.04%]:**

Այսպիսով, **Ֆիզիկական անձ Ռուզաննա Ռոբերտի Հյուսյանի** կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը 26/05/2021 թվականի դրությամբ կազմում է՝ **35,209,800 ՀՀ դրամ [24,800,000 + 10,409,800]:**

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 26/05/2021 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6.Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող
7.Ընդամենը՝ ___-___ թերթ
8.Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի առաջին կարգի մասնագետ **Էլեն Պողոսյան**